

կերակցութեամբ հիմնեցին . այս աշխատանոցը՝ որ տեսակին մէջ ամենակատարեալն է՝ երկու տեսուչ ունի , որոց մին վարդապետական և տնտեսական մասին հոգն ունի , իսկ միւսը քըն-նականին և փորձառականին :

ի Միացեալ-Հաճանդօ նշանաւոր է Ակասաիզ բնապատումին հաստատած աշխատանոցն ՚ի Նիուբորդ . Եւրոպայի հոչակաւոր աշխատանոցաց մին է նաև Նարոլիին՝ զոր կ'ուղղէ Փրոֆ . Տոհրն . աստ հարիւրաւոր գիտնականք աշխատած են ցարդ . այս աշխատանոցը գրեթէ Եւրոպայի ամէն թանգարանաց և հաւաքածոյից զմռած և կամ՝ պահուած կենդանիներ կը մատակարարէ :

## ԹՐՈՒԹՈ

(Ա.Ե.Պ)

**Բ**ՈԼՈՐ շրջակայի բնակիչք՝ Ղուկաս տեարց փարձառ հոդյան վերայ խօսած ատեննին , չգիտեմ ինչո՞ւ , զայն «կալուած» կ'անուանէին : Անշուշտ գեղացիք «կալուած» բառին հարստութեան և ճոխութեան գաղափար մի կը յարէին , քանզի այդ յիշեալ հոդն համայն երկրին մէջ ամենէն աւելի ընդարձակ ճոխ և բարեկարգն էր :

Հինդ կարգ փառաւոր ծառեր կը պատսպարէին դաշտին սաստկաշունչ քամիներէն ընդարձակ բակին մէջ աճած փոքրատեսակ և փափկասուն խնձորենիքը . ուր և կը տեսնուէին կը մինտրով ծածկուած երկայն շէնքեր՝ խոտեղէնքը և հունտեղէնքը պահելու համար . Կոսկէ շինուած գեղեցիկ գոմեր . երեսուն ձիու համար ախոռ և բնակութեան տուն մի՝ կարմիր աղիւսէ կառուցած՝ որ փոքր դղեկի մի կը նմանէր :

Բակը անամոնց քակորներէ միշտ մաքրուած էր . պահապան շուները առանձին խյուեակներու մէջ կը կենային և խումբ մի հաւեղէնք կը պտտէին բարձր արօտին մէջ :

Այն կէսօրին՝ տէր , ծառայ և աղախին , ընդ ամենը տասնը-հինգ հոդի՝ կը նստէին խոհանոցի երկայն սեղանին բոլորակիքը որոց վերայ գրուած էր տաք տաք ապուրը՝ կապոյտ ծաղկօք նը-կարեալ խեցեղէն խոյոր պնակով :

Զիերը , կովերը , խոզերը և ոչխորները գէր , մաքուր և լաւ խնամուած էին . իսկ Ղուկաս աղան ինքը՝ որ բարձրահասակ ու գէրկեկ մարդ էր , օրը երկք անդամ կալուածը աշքէ կ'անցը-նէր , ամեն բանի վերայ կը հսկէր ու կը մոտածէր :

Ախոռին խորը՝ խղճալով կը պահէին տարիքը առած ծեր ճերմակ ձի մի զոր տան-տիկինը կ'ուզէր մնուցանել մինչև նորա բնական մահը որովհետեւ ինքը մեծցուցել էր զնա և քոյը պահել էր միշտ և վրան նայելով անցեալ յիշատակներ միտքը կ'ինկնար:

Ճամնինդ տարեկան կոպիտ մանչ մի՛ իդիդոր Դիւվալ անունով և կամ՝ համառուսիւ Զիդոր կոյուած, այդ անկարող կենդանւոյն վրայ հոգ կը տանէր, ձմեռը կուտար նման խոտի և վարսակի որոշեալ շափը, իսկ ամառը պարտական էր երթալ, չորս անգամ օրը, ձիուն արօտատեղին փոխելու. 'ի գաշտավայրին՝ ուր կը կապէին զինքը որպէս զի թարմ արօտը ուտէ առատաբար:

Կենդանին որ գրեթէ անդամալոյց էր, գժարութեամբ կը վերցնէր իւր ծանը սրունկները, ուռած ծունկերն ու պճեղները. Զիուն մազերն որ այլ բնաւ քերիզով չէին մաքրել, սպիտակ ալեոր մազերու կը նմանէին. իսկ երկայն երկայն արտևանունքը՝ իւր աշաց տիրալի կերպարանք մի կուտային:

Կենդանին այն աստիճանի ոսքերը դանդաղ դանդաղ կը շարժէր որ Զիդոր զինքը արօտատեղին տարած ատեն՝ կը ստիպուէր չուանը քաշերով տանել. և մանչը քամակակոր, հեալէն, կը հայհոյէր կենդանւոյն և կը զայրանար որ իրեն ընկել էր այդպիսի մի պառւած կայկութ ձիուկի մի խնամատարութիւնը:

Կարուածին մարդիկ կը զուարձանային Զիդորին առ Քօքունեցած զայրութը տեսնելով, անդագար կը խօսէին նորա հետ Քօքոյի մասին՝ ստահակ տղուն սիրուը հանելու համար: Իւր ընկերները կը խնտային վրան և գեղին մէջ Քօքո-Զիդոր անունը կուտային նորա:

Մանչը կը կատղէր ու սրտին մէջ փափաք կը մնուցանէր ձիէն վրէծը առնելու: Բարձրահասակ վասուժ աղայ մի էր, աղտոտ-կեղտոտ, շէկ, խիտ ու բիրտ մազերով. ապոշ կը թուէր, կակազերով շատ գժարութեամբ կը խօսէր, գոգցես գաղափարները չէին կարող ձևանալ իւր թանձը գոեհիկ ըզեղին մէջ:

Արդէն շատոնց կը զարմանար Քօքոյին պահածնուն վէայ՝ զայրանալով որ կարուստ կը պատճառէ այդ անօգուտ անասունը: Մէկ մի որ չէր աշխատել, ուրեմն յանիրաւի էր մնուցանելն զնա, զայրագնելու բան էր 'ի զուր վարսակ վասնելը, թանկագին վարսակն՝ այդ անդամալոյց ձիուկին համար: Եւ շատ անգամ Ղուկաս աղային պատուէրներուն հակառակ՝ կէս-շափ կու տար ձիուն, զանց անելով. նաև նորա ստից յարդէ փռոցքը և խուը:

Եւ իւր տղայական պղտոր մոտաց մէջ ոխ կ'աճէր, յափշտակիչ գեղացւոյ, նենդաւոր, վայրագ, կոպիտ և վատասիրտ գեղացւոյ ոխ։



Երբոր ամառն եկաւ, հարկադրեցաւ դաշտ երթալ և կենդանւոյն արածելու տեղն փոխել, Մանչը, ամեն առաւօտ աւելի վայրագանարով՝ յամրաքայլ կ'երթար ցորեններու մէջէն։ Դաշտին միջի աշխատաւորք կը դոչէին կատակելով՝ ու է՛հ, Զիդոր, Քաքոյին բարես մատու։

Զիդոր բնաւ պատասխան չէր տալ, բայց ցանկէ մի անցներ լու միջոց՝ բարակ գաւազուն կը կորէր ու ձիուն կապը տեղաւ փոխելով՝ թոյլ կու տար նախ որ կենդանին արածէ. յետոյ մատնըչի պէս կը մերձենար, կը սկսէր գաւազանով հարուածել ձիուն սովերը, կենդանին կը յանար վախչիլ, կից նետել, հարուածներէն խուսափիլ, բայց միայն չուանին շուրջը ման կու գար կաշկանդուած։ իսկ մանչը՝ զայրութէն ատամները սեղմած՝ ետևէն վաղելով, աշքը մուլժ կոխած, գաղանաբար կը ծեծէր։

Յետոյ, առանց ետևը նայելու, կամաց կամաց կը հեռանար, մինչդեռ ձին՝ իւր ծերու աչքերովը կը նայէր տղուն հեռացածը՝ կողերը դուրս ցցուած և վազվզածին համար շնչասպառ։ Եւ իւր սոկորոս ու ճերմակ գլուխը դէպ յարօտ չէր ծուել մինչեւ որ գեռահասակ գեղացւոյն կապոյտ բաճկոնին հեռանալը չտեսնէր։

Եւ որովհետեւ գիշերները տաք էին, կը թողուին Քաքոյին օր բացօթեայ ննջէ 'ի դաշտի անդ՝ անտառին ետել, խոռոշին եղը. Մի միայն Զիդոր կ'երթար զինքը արածեցնելու։

Ցղան կը զուարճանար դեռ քարերն ետեղով ձիուն. կը նըստէր տասը քայլ հեռուն՝ փոսի մի զառ 'ի վարին վերայ. կէս ժամ նստած կը մնար, երբեմն երբեմն սուր խճաքար մի նետելով ձիուկին՝ որ կանգնած կեցած էր շղթայակապ իւր թշնամոյն առջև՝ անդադար վրան նայելով, առանց արածել համարձակելու նորա երթալէն առաջ։

Բայց միշտ սա մոտածութիւնը մանչուն գիխուն մէջ պինդ կեցած էր՝ թէ «ինչու է սա անգործ և այլ ևս անպէտք ձիուն մնուցանելը»։ Այնպէս կը թուէր նմա որ այդ թշուառական անպիտան անսառունը ուրիշներուն ուտելիքը կը խլէր, մարդկանց ինչքը կը յափշտակէր, Աստուծոյ բարիքը կը գողանար և զիւր անձն ևս կը դողնար, զԶիդոր՝ որ կ'աշխատէր։

Այս ատեն, կամաց կամաց, ամեն օր, մանչը սկսաւ ձիուն արածելու արօտը նուազեցնել ցցին կապած չուանը կարճ թողլով:

Կենդանին կը ծոմէր, կը նիհարնար և կը հիւծէր. կապը քակելու անզօր լինելով, գլուխը կ'երկնցնէր առ բարձր դալար ու փայլուն արօտը, այնպէս մօտիկ իրեն և որոյ հոտը կ'առնուր առանց դպչիլ կարողանալու:

Բայց մէկ առաւօտ, Զիդորին միաքն ընկաւ որ Քօքոյին այլ ևս հարկ չէր տեղափոխել. այլ ձանձրացել էր այդպիսի մի տակոր-կաշի անսասունի համար այնքան հեռուներ երթալէ:

Եւ սակայն եկաւ իւր վրէժը ծծերու. այլայլած կենդանին վրան կը նայէր. նոյն օրը չծծեց. ձեռքերը գրապաններուն մէջ դրած շուրջը ման եկաւ. մինչեւ անգամ զինքը աեղափոխել ձեւացուց, բայց ցիցը կրկին նոյն ծակին մէջ միսց և ելաւ գնաց՝ զմայլած հնարած գիւտին վերայ:

Ձին տեսնելով տղուն հեռացածը, խրխնջեց օրպէս զի ետ դարձունէ. բայց մանչը սկսաւ վազել, թողլով զնա միս-մինակ, հովտին մէջ, ամուռ կապուած՝ առանց կտոր մի դիւրամերձենալի արօտի:

Քաղցած անօթի՝ փորձեց հասնիլ պարարտ արօտին որոյ կը դպչէր ոնդունքներուն ծայրովը: Ծնկան վրայ եկաւ, երկնցուց վիրքն ու լրգունքոտ խոշոր շրթունքները: Այլ 'ի զուր: Բոլոր օրը արին քրտինք մոտաւ, ծեր կենդանին, անօգուտ և սարսափելի ճիգեր թափելով: Անօթութիւնը զինքը կը մաշէր և առաւել ևս կը սաստկանար երբ կը տեսնէր դալարազարդ կերպակուրը որ առատաբար կը տարածուէր մինչեւ հորիզոն:

Մանչը բնաւ չեկաւ նոյն օրը. անտառներուն մէջ թափառեցաւ թռչնոց բոյներ փնտոելու համար: Հետևեալ օրը եկաւ. Քօքօ ճարահատեալ պառկած էր: Տղուն գալուատը տեսնելով տեղէն ելաւ այն յուսով որ հուսկ ուրեմն տեղն պիտի փոխուի: Փոքր գեղջուկը և ոչ իսկ արօտին մէջ ձգուած փայտէ մուրճին դպաւ: Մօտեցաւ, նայեցաւ կենդանւոյն վրան, առաւ ձողակոշտ մի նետեց քթին՝ որ փշրեցաւ սպիտակ մազին վրայ և սուլբով ելաւ գնաց վերասին:

Ձին կանգուն ոտից վրայ կեցաւ որչափ որ կրցաւ զնա նըշմարել. յետոյ տեսնելով որ իւր արօտին հասնելու փորձերն անօգուտ պիտի լինին, կրկին կողին վրայ պառկեցաւ և աչքերը փափեց:

Հետագայ օրը, Զիդոր չեկաւ:

Թաջորդ օրը՝ երբ մօտեցաւ միշտ պառկած Քօքօյին, տեսաւ որ մեռել էր:

Այս ատեն՝ կանդուն մնաց զրան նայելով, միանգամայն զար-  
մացած որ արգէն այդպէս շուտ լմնցել է Ռաքովը դպաւ, «ը-  
րունկներէն մին վեր վերուց և յետոյ վար ձգեց, վրան նըս-  
տաւ և աչքերը արօտին սհեռած մնաց՝ պառանց մէկ բանի վե-  
րայ խորհելու։

Վերադառնարով կառուած՝ մարդու բան չասաց, քանզի կ'ուս  
զէր տակաւին թափառիլ՝ ձիուն արօտատեղին փոխելու ժամե-  
րուն։

Հետեւալ օրը գնաց ձիուն տեսութեան. երբ մօտիկցաւ, ագ-  
ռաւներ վեր թռան, Անթիւ ճանճեր կը շրջէին ձիուն մարմնոյն  
վերայ և շուրջը կը բզզային։

Ճուն գառնարով՝ հանդիպածը իմացուց։ կենդանին այն աս-  
տիճանի ծեր էր որ ոչ ոք չզգարմացաւ։

Տէրը ասաց երկու հատ ծառայի. — Առելք բահերդ և փոս փո-  
րեցէք նոյն խոկ այն տեղը ուր Քօքօ ընկած է։

Եւ մարդիկ թաղեցին ձիուն՝ ճիշտ այն տեղը ուր անօթու-  
թենէ մեռած էր։

Խոկ արօտը, խեղճ կենդանւոյն մարմնէն սնունդ առնելով՝  
րուսաւ անդ պարարտագոյն, խիտ առ խիտ և գալարագեղ։

ԹԱՐՓ. Ա. Ռ. ԲԻՄԱՑՆԱՆ

Գիշ դը Մօպասան

## ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՓՐԻԿԵՒ

### ԱԴԱՄԱՆԴԻ ՀԱՆՔԵՐԸ

**Բ**ՈՎԱՆԴԱԿ հարաւային Ափրիկէի շարքը և սակաւ ինչ հեռի 'ի ծով-  
եզերաց՝ բարձրաբերձ և սրածայր լերանց շղթայ մը կը պատէ, յոր սա-  
կաւաթիւ են անցը՝ աստի անոր Քարոս դաշտագետինը կը տարածուի, ո-  
րոյ բարձրութիւնն յերեսաց ծովու 1100—1300 մէտր է։

Այս երկրին մէջ նշանագելի բան է ջրոյ բացարձակ պակասութիւնը.  
Ժիայն հիսխայյին գաւառները կը թընեն Օրանժ, վաալ և Մոտտէր գե-  
տակները. ճմեռ ժամանակ երգեմն այնքան չափազանց ձիւն կը տեղայ՝ որ  
մեծամեծ աղիսից պատճառ կ'ըլլայ։ կենդանիք՝ մասնաւորապէս ոչխարը,  
որոց բուրգն անդ բնակեալ Հոգանացուց վաճառականութեան զիխաւոր առար-